

չին ընկերացող աշակերտներուն քնացած տեղը, որ Ս. Կուսի տաճարին մօտ, քարայր մըն է. ինչպէս նաև Յիսուսի աղօթած ու քահանայապետներէն կալանաւորուած տեղը կը կոչուի «Ձիթենեաց Պարսեզ»ը, զոր կը յիշէ Աւետարանիչը և որուն մօտ կը գըտանուէր Յուդայի մատնութեան այն քարը, զոր Պորտոյի անանուն ուխտաւոր ուղեգիրը 333 ին կը նկարագրէ իր գիրքին մէջ:

Ձիթենեաց պարտէզին այս շրջանակը նուիրական վայր մը դարձած էր ընդհանուր քրիստոնէութեան համար. նոյն պարտէզին հինաւորաց ձիթենիները, որ ժողովրդեան լեզուով ողջունի ծառեր կը կոչուէին, հեռի երկիրներէ եկող գունդ գունդ ուխտաւորներու բարեպաշտական զգացմանց առարկայ կը դառնային ու պաշտումի այլ և այլ յիշատակներ անմահացուցած էին այդ քրիստոնէական սուրբ տեղերը. դարերու ընթացքին տեղական աւանդութիւնները այդ Ս. վայրերու պաշտումը ու քրիստոնէական սրտագրաւ վաղեմի դրուագները կը հրապուրէին քրիստոնեայ աշխարհը. բոլոր եկեղեցիներու ուշադրութիւնը կեդրոնացած էր այդ Ձիթենեաց պարտէզին վրայ ու անոնք կ'ուզէին մէկը մէկէ խլել նոյն պարտէզը, մեծագոյն պարծանքի լուրացման զգացումով ուրախանալու համար:

Փրանչիսկեանք ժէ. դարու կիսուն տիրացան նոյն տեղոյն և պատով մը շրջապատեցին և ծաղկանոցի վերածեցին զայն: 1892 ին մասնաւոր պեղումներով երևան հանուեցաւ Պաշակրաց օրէն կործանուած եկեղեցիի մը աւերակոյտը. այլ և այլ քանդակեալ մարմարի մնացորդ կտորներէն ու ճարտարապետական կառուցումէն յայտնի եղած է թէ լատին թագաւորութեան հիմնարկութեան ժամանակի եկեղեցիի մը բեկորներն էին երևան ելած հնութիւնները: Փրանչիսկեանք մտածեր էին նոյն տեղոյն վրայ շինել եկեղեցի մը. ուստի 1920 ին շարունակեցին մաքրել գտնուած եկեղեցիին գետինը հիմնարկութիւն կատարելու համար և մինչ պեղումները կը խորանային՝ հնագոյն պատի մը մասերը մէջտեղ ելան և երբ տւելի խորացուցին հետախուզութիւնները նոր յատակներ բացուեցան և երևան եկան զեղեցիկ քանդակներով խոյակներ, մարմարեայ սիւներ, բազմապիսի և գունաւոր գեղ մողայիքներ, ինչպէս նաև որմանկարներու կտորներ որոնք ամենուն զարմանքը գրաւեցին. վասն զի անոնք կը ցոլացնէին վաղեմի ճարտարապետութեան և նկարչութեան մը զարգացեալ